րողներէն[1], Բարունակ ամիրայ, Մխաք ամիրայ, Տատեան Պօղոս Պէյ և Մկրտիչ ամիրայ Ճէզայիրցի[2] պաշտպանն Զաւգիւղցիներուն և Շահնազարեան Կարապետ վարդապետին: Տեղն է հոս նաեւ յիշելու Պետրոս ամիրայ Եուսուֆեանը (ծ. 1780 մ. 1846). Պօղոս Պէյ Եուսուֆ և, բաւական ետքը, Նուպար փաշա Թագւոր փաշա Սմիւռնացի ջօջերը, որ մեծ մասով Եգիպտական վառ գօտիին տակ շինեցին իրենց բաղդն ու փառքն և կապեցին իրենց ադամանդակուռ գօտին[3]:

Ահա այս հանրագիծ ակնարկութիւններով և տիտղոսներով՝ կը հասնի մինչեւ 1835 Թուրքահայերուն ամիրայութիւնը, փաշայութիւնը և պէյութիւնը, մանաւանդ ամիրայութիւնն իբրեւ չեչաեալ դրուատանուն (titre) մը ժողովրդական՝ ի փոխարինութիւն կարգ մը անձնական կամ ժառանգական բարեմասնութեանց, աւագութեանց, բարեպաշտիկ գործերու, նուիրատուութեանց, եկեղեցաշինութեանց և դուն ուրեք ալ գիտութեանց կամ հեղինակութեանց:

Իրենց վրայ աւելի ներբողեալ ծանօթութիւններ առնել փափագողը կրնայ դիմել Օրթագիւղի, Բերայի, Սկիւտարի ու Պալըգլըյի հին տապանագիրներուն, որ մեծ մասով Եզեկեան Յովհաննէսի կամ Փեշտըմալճեանի դարուս սկիզբի ամիրաներուն փիլիսոփային՝ գրիչներէն ելած են. անոնցմէ մաս մը օրինակուած ալ է Ղալաթիայի Ազգ. Մատենադարանին Գ.րդ դարակին

1. Տե՛ս Պատմութիւն Ազգ. Հիւանդանոցին, Բիւզանդ Քէչեանի։

2. Ասոր վրայ՝ քիչ մը վարն աւելի ընդարձակ գրած ենք։

3. Զմիւռնացիներուն մէջ Պ. Մուրատ Յարութիւնեանն ալ երեւելի է, որ կը բնակէր Երուսաղէմի մէջ և բարեկամ էր Ս. Յակոբայ վանքին և միշտ կօգնէր անոր իր խորհրդովն և ազդեցութեամբ, մանաւանդ երբ Եուսուֆեան Պօղոս Պէյի շնորհիւ Սարտենիայի ու Նափոլիի հիւպատոսութեան հասնելով՝ ճոխացաւ թէ պատուով թէ հարըստութեամբ։ Ինք կտակած է Երուսաղէմի վանքին բաւական կալուած։